

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	3
1.4. Առևտուր	4
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	6
4. ՓՈԽԱՐԺԵՔ	7
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	7
5.1. Պետական բյուջեի հարկային եկամուտները	7
5.2. Պետական պարտք	9
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	9
6.1. Գնաճ	9
6.2. Ավանդներ	10
6.3. Վարկեր	11
7. ԱՄՓՈՓՈՒՄ	12

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


Նախորդ տարի՝ 2025 թվականին, գրանցվել են սպասվածից բարձր տնտեսական ցուցանիշներ. այսպես՝ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 9.2%, իսկ ՀՆԱ-ի իրական աճը՝ 7.2%: Մինչդեռ, ըստ 2025թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների, իրական ՀՆԱ-ի աճը 2025թ. պետք է կազմեր 5.1%: 2026թ. նույնպես սկսվել է ՏԱՑ-ի բարձր ցուցանիշով: Հունվարին տնտեսական ակտիվությունը նախորդ տարվա հունվարի համեմատ աճել է 7.6%-ով, այն դեպքում, երբ 2025թ. հունվարին ՏԱՑ-ը կազմել էր 7.3%: Այնուամենայնիվ, 2026թ. հունվարի աճն ավելի ցածր է, քան 2022-2024 թվականների նույն ամսվա ցուցանիշները:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2026թ. հունվարին ՏԱՑ-ի աճին ամենամեծ նպաստումն են ունեցել արդյունաբերության և ծառայությունների ճյուղերի աճերը՝ համապատասխանաբար 3.1 և 2.7 տոկոսային կետով: Շինարարության և առևտրի ճյուղերի նպաստումները, թեև դրական են եղել, սակայն համեմատաբար ավելի փոքր՝ համապատասխանաբար 1.3 և 0.4 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2026թ. հունվարին, տոկոսային կետ¹



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության ոլորտի աճը բավական բարձր է եղել տարեկազբին, սակայն էականորեն զիջում է նախորդ տարվա վերջին ամիսների աճերին: 2026թ. հունվարին արդյունաբերության աճը կազմել է 10.6%, որն էականորեն ցածր է նախորդ տարվա վերջին ամիսների աճերից (նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների միջին աճը՝ 35.2%): Այնուամենայնիվ, 10.6% աճը նույնպես բավական բարձր է, ինչը կարող է պայմանավորված լինել ոսկու վերաարտահանման գործունեությամբ՝ «հիմնական մետաղների արտադրություն» ենթաօլորտի աճով, սակայն դրա մասին

¹ Նպաստումների հաշվարկն իրականացվել է SUՑ-ի 2025թ. տարեկան կշիռների հիման վրա: Տարեկան և ամսական կշիռների տարբերությունների պատճառով առաջացող մնացորդը բաշխվել է ոլորտների միջև՝ նորմավորելով ըստ նպաստումների չափերի:

կարող ենք հստակ նշել՝ արդյունաբերության ենթաուղղությունների ցուցանիշների հրապարակումից հետո (դրա մասին կխոսվի հաջորդ ամսվա տեղեկանքում):

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության աճի տեմպը և բավական բարձր է եղել տարվա առաջին ամսվա ընթացքում՝ կազմելով 18.7%, շուրջ 7.1 տոկոսային կետով բարձր լինելով նախորդ տարվա հունվարի ցուցանիշից:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտի աճի տեմպը, ի տարբերություն արդյունաբերության և շինարարության, ավելի ցածր է եղել, քան նախորդ տարվա հունվարի ցուցանիշը: 2026թ. հունվարին ծառայությունների ոլորտում գրանցվել է 7.4% աճ՝ նախորդ տարվա 12.2-ի դիմաց: Այս աճին նպաստում ունեցած

հիմնական ենթաուղրտների մասով տեղեկատվությունը հնարավոր կլինի ներկայացնել հաջորդ ամիս՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մասին վիճակագրության հրապարակումից հետո:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի աճի տեմպը բավական ցածր է եղել: 2026թ. հունվարին առևտրի ոլորտում գրանցվել է ընդամենը 0.7% աճ՝ նախորդ տարվա հունվարի 14.6% աճից հետո: Առևտրի աճի նման ցածր արդյունքը կարող է լինել հենց նախորդ տարվա բարձր ցուցանիշի հետևանք (բազայի էֆեկտի պատճառով), սակայն այս դեպքում նույնպես առավել մանրամասն տեղեկատվություն հնարավոր կլինի ներկայացնել հաջորդ ամսվա տեղեկանքում:


2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



Արտահանման աճի տեմպը բացասական է եղել: 2026թ. սկսվել է արտահանման բացասական ցուցանիշով՝ 13.5% անկումով: Հատկանշական է, որ նախորդ տարվա հունվարին արտահանումը ևս խոր անկում էր գրանցել, ինչը հիմնականում պայմանավորված էր բազայի էֆեկտով (2024թ. չափազանց բարձր արտահանման ցուցանիշներով՝ հիմնականում ոսկու վերաարտահանման հետևանքով): Սակայն արտահանման դեզագրեզացված ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել, հետևաբար հնարավոր չէ առավել հստակ նշել անկման պատճառների մասին:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %




Ներմուծման ծավալները նույնպես նվազել են: Ներմուծման մասով նմանատիպ իրավիճակ է. նախորդ տարվա խոր անկման պայմաններում,

ընթացիկ տարվա հունվարին նույնպես գրանցվել է ներմուծման ծավալների անկում՝ շուրջ 11.2%-ով:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ²

Անվանական աշխատավարձի աճը նախորդ տարի մնացել է համեմատաբար ցածր մակարդակում: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2025 թվականին աճել է 5.6%-ով՝ կազմելով 303,140 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձի աճը եղել է 5.1% (կազմելով 327,604 դրամ), իսկ պետական հատվածում՝ 6.5% (կազմելով 239,369 դրամ): **Հարկ է նշել, որ պետական հատվածում աշխատավարձերի աճը 2025թ. հունվար-նոյեմբերին կազմում էր 5.4%, և միայն դեկտեմբերի տվյալներով, ամբողջ տարվա աճը արագացել է՝ հասնելով 6.5%-ի, ինչը խոսում է պետական հատվածում դեկտեմբերին տրված պարզազեղումների կտրուկ աճի մասին:**


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2024-2025թթ. հունվար-դեկտեմբերին, %



² Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, 2026թ. հունվար ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈՒՍԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



2026թ. հունվարին ՀՀ դրամը փոքր-ինչ արժևորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ և արժեզրկվել եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ: 2026թ. հունվարին ՀՀ դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 380.0 դրամ՝ նախորդ տարվա հունվարի նկատմամբ արժևորվելով 4.7%-ով: Եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը նույն ժամանակահատվածում արժեզրկվել է՝ համապատասխանաբար 7.5% և 19.5%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ³


5.1. Պետական բյուջեի հարկային եկամուտները

Պետական բյուջեի հարկային եկամուտներն աճ են գրանցել հունվարին, որը, սակայն, էականորեն ցածր է նախորդ տարվա հունվարի աճից: Այսպես՝ 2026թ. հունվարին հարկային եկամուտների աճը կազմել է 7.8%, որը ցածր է

³ Պետական բյուջեի հունվար ամսվա ցուցանիշները ՀՀ ՖՆ կողմից դեռևս չեն հրապարակվել: Հարկային եկամուտների վերլուծությունն իրականացվել է ՀՀ ՊԵԿ տվյալների հիման վրա:

ինչպես նախորդ տարվա հունվարի, այնպես էլ նախորդ տարվա միջին ամսական աճի տեմպից:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների աճին ամենամեծ նպաստումն ունեցած հարկատեսակներն են՝ եկամտային հարկը (աճը՝ 19.0%), ԱԱՀ-ն (աճը՝ 6.8%) և այլ հարկերը (աճը՝ 76.3%), որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 5.2, 2.5 և 2.0 տոկոսային կետ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2025թ. Հունվար		2026թ. Հունվար	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	31.1	31.1	7.8	7.8
Ավելացված արժեքի հարկ	46.0	15.4	6.8	2.5
Ակցիզային հարկ	-17.3	-1.9	3.4	0.2
Շահութահարկ	72.7	4.3	-61.2	-4.7
Պետական տուրք	22.4	0.5	57.2	1.3
Մաքսատուրք	13.6	0.4	-20.7	-0.6
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	56.9	0.7	-6.2	-0.1
Այլ հարկեր	1.6	0.1	76.3	2.0
Շրջանառության հարկ	19.4	1.4	20.6	1.4
Եկամտային հարկ	36.0	9.5	19.0	5.2
Սոցիալական վճարումներ	12.1	0.7	12.4	0.6

5.2. Պետական պարտք

ՀՀ պետական պարտքի վիճակագրությունը փոփոխվել է 2026թ. հունվարից: Մասնավորապես, ՀՀ պետական պարտքի մասին օրենքում 2025թ. կատարված փոփոխությունների համաձայն, ՀՀ կառավարության պարտքը չի ներառելու պետական երաշխիքները, որոնք նախկինում համարվում էին պարտքի բաղկացուցիչ մաս: Բացի այդ, ՀՀ պետական պարտքը այլևս չի ներառելու ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը և փոխարենը ներառելու է համայնքների պարտքը:


2026թ. հունվարի համար պարտքի վիճակագրությունը հրապարակվել է արդեն վերանայված մոտեցմամբ: Ըստ այդմ, կառավարության պարտքը հունվարի վերջի դրությամբ կազմել է 14.1 մլրդ ԱՄՆ դոլար՝ 2025թ. դեկտեմբերի համեմատ աճելով 211.9 մլն ԱՄՆ դոլարով կամ 1.5%-ով: Կառավարության պարտքի ցուցանիշները նոր մեթոդաբանությամբ նախորդ տարվա համար չեն հաշվարկվել:

Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են: Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (տոկոսադրույքը) 2026թ. հունվարին կազմել է 7.2%՝ նախորդ ամսվա համեմատ նվազելով 0.2 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա հունվարի համեմատ՝ 1.4 տոկոսային կետով: Հունվարին տեղաբաշխվել են նաև երկարաժամկետ պարտատոմսեր, որոնց եկամտաբերությունը կազմել է 8.1%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 1.9 տոկոսային կետով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 12. 12-ամսյա գնաճ, %




Գնաճի կայուն տեմպը շարունակվում է նաև 2026թ.: Գնաճի տեմպը 2025թ. բավական կայուն է եղել՝ միջինում կազմելով 3.3%: 2026թ. հունվարին գնաճը

կազմել է 3.8%՝ շարունակելով գտնվել << կենտրոնական բանկի համար սահմանված թիրախային՝ 3.0% ±1.0 տոկոսային կետի միջակայքում:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 13. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպը հունվար ամսին արագացել է: 2026թ. հունվարին ավանդների աճը նախորդ տարվա հունվարի համեմատ կազմել է 17.2%՝ գերազանցելով նախորդ տարվա աճերը: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներից, այնպես էլ ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճերով՝ համապատասխանաբար 18.6% և 12.3%:

Գծապատկեր 14. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2026թ. հունվարին ավանդների աճն առավելապես պայմանավորված է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճով, որի նպաստումը

կազմել է 7.9 տոկոսային կետ: Տնտեսության մյուս հատվածներից ներգրավված ավանդների ծավալները նույնպես դրական են նպաստել ընդհանուր ավանդների աճին:


6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպը թեև բարձր է եղել, սակայն զիջել է նախորդ տարվա աճերին: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2026թ. հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 21.7%-ով (նախորդ տարվա միջին աճը կազմել է 26.8%): Աճել են և՛ ռեզիդենտներին, և՛ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները՝ համապատասխանաբար 21.5% և 25.4%-ով:

Գծապատկեր 15. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 16. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում իրավաբանական անձանց վարկերն աճել են 23.6%-ով, իսկ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը՝ 19.4%-ով: Վերջիններիս նպաստումները կազմել են համապատասխանաբար 11.8 և 9.7 տոկոսային կետ:

Գծապատկեր 17. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ⁴



2026թ. հունվարին բոլոր ոլորտներին տրամադրված վարկերն աճել են՝ դրականորեն նպաստելով վարկերի ընդհանուր ծավալի աճին: Առավել նշանակալի է եղել սպառողական վարկերի աճը (28.4%), որն ունեցել է 6.3 տոկոսային կետ նպաստում: Վարկերի աճին զգալի նպաստում են ունեցել նաև ծառայությունների ոլորտին տրվող վարկերի (աճը՝ 20.5%), հիպոթեքային (աճը՝ 13.5%) վարկերի և շինարարության (աճը՝ 29.3%) ոլորտին տրամադրվող վարկերի աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.3, 3.1 և 3.0 տոկոսային կետ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2026թ. սկսվել է բավական բարձր տնտեսական աճի ցուցանիշով: 2026թ. հունվարին ՏԱՑ-ը կազմել է 7.6%՝ գերազանցելով նախորդ տարվա հունվարի ցուցանիշը 0.3 տոկոսային կետով: Սակայն տնտեսական աճին հիմնական նպաստում ունեցող ճյուղը՝ արդյունաբերությունը, նախորդ տարվա վերջում աճում

⁴ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

Էր հիմնականում ոսկերչական ապրանքների վերաարտահանման հաշվին: Հետևաբար, հնարավոր է, որ տնտեսական ակտիվության բարձր աճը պայմանավորված լինի հենց այդ գործոնով:

2026թ. հունվարին ՏԱՑ-ի աճին հաջորդ ամենամեծ նպաստում ունեցող՝ ծառայությունների ոլորտի աճի տեմպն ավելի ցածր է եղել, քան նախորդ տարվա հունվարի ցուցանիշը: 2026թ. հունվարին ծառայությունների ոլորտում գրանցվել է 7.4% աճ՝ նախորդ տարվա 12.2-ի դիմաց (վերը նշված ոլորտների մասին առավել մանրամասն հնարավոր կլինի վերլուծել ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մասին հունվար ամսվա վիճակագրության հրապարակումից հետո):

2. Արտաքին առևտրի ցուցանիշները անկում են գրանցել: Ե՛վ արտահանման, և՛ ներմուծման ծավալները նվազել են 2026թ. հունվարին՝ համապատասխանաբար 13.5% և 11.2%-ով: Սա այն դեպքում, երբ նախորդ տարվա հունվարին ևս էական անկումներ էին գրանցվել: Արտաքին առևտրի տվյալները մտահոգիչ են, սակայն դրանց մասին վերլուծությունը նույնպես հնարավոր կլինի իրականացնել ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մասին վիճակագրության հրապարակումից հետո:

3. Պետական բյուջեի հարկային եկամուտներն աճ են գրանցել հունվարին, որը, սակայն, էականորեն ցածր է նախորդ տարվա հունվարի աճից: 2026թ. հունվարին հարկային եկամուտների աճը կազմել է 7.8%, որը ցածր է ինչպես նախորդ տարվա հունվարի, այնպես էլ նախորդ տարվա միջին ամսական աճի տեմպից:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**